ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, Էլ. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am

13.09.2023
351-71

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բաղասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղասյան,

Երկակի նշանակության (հսկվող) ապրանքների արտահանման վերաբերյալ իրականացվող հետազոտության շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ներկայացված հարցմանն ի պատասխան նախարարությունը հայտնել էր, որ 2021, 2022 և 2023 թվականներին ՀՀ տարածքով հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման՝ օրենքով սահմանված որևէ ծանուցում չի ստացվել: Ըստ այդմ, ՀՀ-ում չարտադրված հսկվող ապրանքների արտահանման դեպքում արտահանմանը ըստ էության միշտ նախորդել է այդ ապրանքների ներմուծում:

Նույն հետազոտության շրջանակներում հանդիպել ենք հսկվող ապրանքների ներմուծման և արտահանման «հեռավար» իրականացման հետևյալ նկարագրությանը. երբ հսկվող ապրանքները նախատեսվում է ձեռք բերել դրանք այդուհետ Ռուսաստանի դաշնություն արտահանելու համար, ապա այդ ապրանքները ֆիզիկապես ՀՀ չեն մտնում, այլ իրականացվում է փաստաթղթային ներմուծում և արտահանում, իսկ ապրանքները ֆիզիկապես ՀՀ ներմուծվելու փոխարեն միանգամից ներմուծման երկրից առաքվում է ՌԴ՝ փաստաթղթային ներմուծման և արտահանման դեպքում պահպանելով ներմուծման եւ արտահանման՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները (պատշաճ հայտարարագրումը, մաքսազերծումը, հսկվող ապրանքի արտահանման թույլտվության ստացումը և այլն):

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք հայտնել

1. Արդյո՞ք վերևում նկարագրված դեպքում ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ապրանքները ֆիզիկապես ՀՀ տարածք չմտնելը ՀՀ օրենսդրության որևէ խախտում է (արդյո՞ք պարտադիր է ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ապրանքների ֆիզիկական առկայությունը ՀՀ տարածքում (պայմանով, որ ներմուծման կամ արտահանման մյուս բոլոր կանոնները պահպանվում են)):
2. Եթե այո, ապա խնդրում ենք հայտնել, թե ո՞ր իրավական ակտի ո՞ր դրույթի (արտահանման կամ ներմուծման ո՞ր կանոնի խախտում է):
3. Եթե խախտում է, ապա խնդրում ենք նաև հայտնել, արդյո՞ք հսկվող ապրանքների ներմուծման և արտահանման «հեռավար» իրականացման վերևում նկարագրված մոդելը հնարավոր է մաքսային պատշաճ

հսկողության պայմաններում (այլ կերպ ասած՝ արդյո՞ք հնարավոր է առանց մաքսային ծառայողին խախտման մեջ ներգրավելու):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան